

ՌԵԺԻՍՈՐԸ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ



Հայ գրականության պատմությունը հոգևոր բազմաշերտ կուտակումների գանձարան է: Ասել է թե՛ այն իր սահմաններում ներառում է ոչ միայն գրողների արձակ և չափածո երկերը, այլև հրապարակախոսական, գրաքննադատական, լրագրական և այլ տեսակի ստեղծագործություններ, որոնք ընդհանրության մեջ ներկայացնում են տարբեր ժամանակաշրջանների պատմամշակութային ձեռքբերումները՝ հաստատելով ժողովրդի քաղաքակրթության մակարդակը: Երևույթի խոսում վկայություններից է Հայոց հանձարների՝ Սովսես Խորենացուց մինչև Գրիգոր Նարեկացի, Նարեկացուց-Խաչատուր Աբովյան, Աբովյանից-Հովհաննես Թումանյան, Թումանյանից-Եղիշե Չարենց, Չարենցից-Պարույր Սևակ պատմագրական ժառանգությունը: Այսպես՝ անընդմեջ, հեռագնա:

Որպես Աստծո քարտուղար՝ նրանք իրենց գեղարվեստական կերպարներին զուգընթաց մեծարել են ժողովրդանվեր այն գործիչներին, ովքեր մեծապես նպաստել են մշակույթի զարգացմանն ու հարստացմանը:

Ազգապահպան ավանդույթի լավագույն օրինակներից է տաղանդավոր բանաստեղծ Ռոբերտ Եսայանի 2018-ին հրատարակված «Թատերարվեստի երախտավորը» ժողովածուն, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 240 էջ, (խմբագիր՝ Վարդան Հակոբյան)՝ նվիրված ԼԴՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանի գործունեությանը: Նշենք, որ հայ թատերարվեստի բնագավառում ունեցած նշանակալի վաստակի համար Լեոնիդը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե» և ԼԴՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով: Արժանացել է նաև ԼԴՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակի:

Ընթերցելով բավականին ծավալուն ժողովածուն՝ հաճույթի և հպարտության երկակի զգացումներ են համակում սիրտդ մի կողմից՝ գրքի հեղինակի, մյուս կողմից՝ նրա հերոսի հանդեպ:

Բանաստեղծ Ռոբերտ Եսայանը դեռևս իր առաջին գրքից գնահատվել է որպես Հայտնություն, տասնյակ հատորների հասնող չափածո երկերով մտել արդի հայ պոեզիայի անմար աստղաբույլի մեջ և շարունակում է արարել՝ ամեն անգամ հիացնելով պոեզիայի սիրահարներին ու խստապահանջ քննադատներին:

Սակայն մեր այս հոդվածի հիմնական նպատակը Ռոբերտի բանաստեղծական գործունեության գնահատումը չէ, այլ Ռոբերտ-լրագրողի: Նրա տպագիր ակնարկները, հարցազրույցները, ռեպորտաժները, ինֆորմացիաներն Արցախյան ազգային-ազատագրական շարժման ու պատերազմի հերոսների մասին հատորներ են կազմում:

Ռոբերտն իր վերջերս տպագրված «Խաչ և սուր» ժողովածուի մեջ Արցախյան պատերազմը գնահատում է որպես Ազգային-ազատագրական գոյամարտ:

Բանաստեղծի հենց այդ վերաբերմունքն է, որ արարող հոգուն հանգիստ չի տալիս, մղում է ստեղծագործական նոր հորիզոնների, որի նվաճումներից է «Թատերարվեստի երախտավորը» բազմաբովանդակ ժողովածուն: Նրանում առկա են բանաստեղծությունը, հարցազրույցը, թատերախոսությունը, գեղարվեստական ակնարկը, տեղեկատվական ինֆորմացիան և այլ ժանրեր:

Գիրքը բացվում է «Թատրոն» բանաստեղծությամբ՝ նվիրված Լեոնիդ Հարությունյանին: Սովորական ծոն չէ դա, այլ թատերական արվեստի փիլիսոփայության բացա-

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

հայտում: Բանաստեղծը բեմը համարում է «հիշողության ավազան», որտեղ ռեժիսորը «Ոգու քառսից հանում է դերեր և դնում իրականության առանցքում որպես կողմնացույց»: Հայացքն ուղղելով իր հերոսին՝ բանաստեղծն ընդհանրացնում է.

Դու չես բեմադրում
Հիշողության վարք,
Դիմակների կախարան,
Զիզգազների ծնեռ...
Պարսպավոր հույսի ճառագայթն ես ձգում
Խղճի զնգզնգացող սապատների միջով,
Եվ լողում է աստղը աստանդական Ոգու,
Ու գազաթն է Շուշին թևող հորիզոնի:(էջ 3)

Վեց բաժիններից բաղկացած գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ: Հերոսի կենսագրական տվյալների շարադրանքը գրքում գեղարվեստական երանգներ ունի՝ առնչված բովանդակությանը: Աշխատության բաժիններում հեղինակը ներկայացնում է հերոսի ուսումնառության շրջանը, բեմական կյանքի տարբեր փուլերը, Շուշին որպես բարձունքային մտածողություն, այն Շուշին, որտեղ արդեն հանդես են գալիս բեմարվեստի տարբեր կուլեկտիվներ, անհատներ՝ իրենց մարդկային փոխհարաբերությունների շիկացմամբ: Գիրքը կարելի է որակել որպես գեղարվեստական երկ, որի հերոսը ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանն է:

Գրքի բաժինների վերնագրերն անգամ խոսում են հեղինակի պատկերավոր մտածողության և արվեստի փիլիսոփայության ընկալման մասին: Առաջին բաժինը կրում է «Ռեժիսորը ձգտում է բացահայտել «Ոգու նոր գյուտը» վերնագիրը: Ռոբերտը բարձր է գնահատում ռեժիսորի դերը դրամատիկական երկերը բեմադրելու գործում: Նա ըստ էության ներկայացնում է Լեոնիդ Հարությունյանի ռեժիսորական աշխատանքային ոճը, նյութին ստեղծագործաբար մոտենալու հմտությունը: Եվ իր կարծիքը հաստատում է ռեժիսորի ուղղակի խոսքով. «Նյութը պիտի բացահայտել խորքից, յուրաքանչյուր ներկայացում յուրօրինակ քննություն է թե՛ ռեժիսորի և թե՛ դերասանների համար: Կարևոր է նաև ներկայացման նկարչական ձևավորումը, որն օրիգինալ լինելուց բացի շնչավորում է նաև ենթատեքստային ասելիքի կոլորիտային ոգին» (էջ 5):

Նշելով Լ. Հարությունյանի կատարելագործման արդյունավետ փուլը՝ Պետերբուրգում մեծն Գեորգի Տոփստոնոզովի ղեկավարությամբ՝ հեղինակն ընդգծում է նաև նրա բացառիկ կարողությունը, որի առաջին հաջողությունը Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության բեմադրությունն էր Երևանի թատերական ինստիտուտի դահլիճում:

Ռ. Եսայանը մասնագետի զարգացման կարևոր օջախն արդարացիորեն համարում է բուհը, որտեղ նա ստանում է անհրաժեշտ գիտելիքներ: Եվ արդարացիորեն ընդգծում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերը, որի շրջանավարտներից է Լ. Հարությունյանը:

Ռոբերտը կարևորում է ռեժիսորի ստեղծագործական ունակությունների զարգացման ու բացահայտման օջախի նշանակությունը: Այստեղ նա մատնանշում է Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը, որտեղ բացահայտվեց Լ. Հարությունյանի տաղանդի ուժը: Թատերարվեստի այս օջախում նա բեմադրեց Մ. Գորկու «Քաղթենիներ», Ա. Պապայանի «Գնա մեռիք, արի սիրեմ», Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում», Ա. Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն», «Ամենդ մեղավորներ», Ն. Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն», Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», Ալ. Շիրվանզադեի «Չար ոգին», Հ. Շիրազի «Սիամանթո և Խջեգարե» և այլ պիեսներ՝ արժանանալով հանդիսատեսի չթուլացող ուշադրությանը:

Ռ. Եսայանը Լ. Հարությունյանի ստեղծագործական հաջողությունների շարքն է դասում Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան դրամատիկական թատրոնում հիմնադրած «Աստղիկ» ստուդիան, որտեղ կատարելագործվում էին երիտասարդ դերասանները: Ինչ վերաբերում է նրա գործունեությանը Շուշիում, գրքի հեղինակն այն համարում է նոր աստիճան ռեժիսորի գործունեության մեջ: 2007թ. նշանակվելով Շուշիի

«Աստղիկ» մանկապատանեկան թատրոնի հիմնադիր տնօրեն և գեղարվեստական ղեկավար՝ նա «Աստղիկ»-ը համալրեց նոր աշխատողներով ու վերականգնեց Շուշիի Ս. Խանդամիրյանի անվան պետական թատրոնը:

Խոսքաբեր հարցերի միջոցով Ռ. Եսայանը հոգեբանական ու արվեստագիտական հմտությամբ բացում է իր հերոսի հարուստ կենսագրության դմերը և ներկայացնում ընթերցողին:

Գրքի երրորդ բաժնում Ռոբերտը կարևոր հարցադրումներով շեշտում է ռեժիսորի հոգևոր կապն իր ծննդավայր Գյումրի քաղաքի հետ, որի բեմն Արցախյան պատերազմի տարիներին դարձել էր ազգային-ազատագրական պայքարի արձագանքների տեսադաշտ:

Ելնելով ռեժիսորի ծանր ու դառն հուշերից՝ Ռոբերտն առանձին էջեր է նվիրել Սպիտակի ահավոր երկրաշարժին, որի պատճառով ավերակվեց նաև Գյումրին, որտեղ այդ օրերին աշխատում էր ռեժիսորը: Ռոբերտի վշտոտ հարցին Լ. Հարությունյանը պատասխանում է լավատեսությամբ. «Կարիք չկա տրվել անհուն վշտին, կուլ գնալ ու կոտրվել հոգեպես,- ասում է նա,- ինչո՞ւ տրվել տխրության ալիքներին, պետք է հաղթահարել վիշտը և աշխատանքի միջոցով ամրապնդել մեր սասանված ոգին: Եկեք ամանորյա ներկայացում բեմադրենք և ավերակված քաղաքին ծիծաղ պարզենք» (էջ 103):

Ահավոր երկրաշարժից 14 հարազատ կորցրած ռեժիսորը հայ մարդուն հատուկ կամքի ուժով անցնում է աշխատանքի: Նրա հանդիպումները մեծանուն դերասան Խորեն Աբրահամյանի հետ հաստատում են անմահ Վահրամ Փափազյանի իմաստախոսությունը. «Կյանքում ոչինչ չկա հավիտենական, մարդն ինքը հավիտենական չէ՞ Ռ-չինչ հարատև չի եղել, չկա. մշտնջենականությունն իմաստից զուրկ է, և կյանքն ինքը սկզբնավորությունների անվերջ շարան է» (էջ 105):

Լեոնիդը, արձագանքելով հանճարեղ դերասանի իմաստախոսությանը, ընդգծում է. «Կարելի է ասել, որ սկզբնավորությունների շարան է և իմ կյանքը: Աղետից հետո նոր բան սկզբնավորելը մի քիչ դժվար էր: Նոր ներկայացում բեմադրելու առաջարկությունը կախվեց օդում: Փլատակների տակից կանչում էր ինձ մի ծայն. «Խաղալիքների փախուստը»՝ Սպիտակ թուղթ էր դրված սեղանին... Կողքին գրիչը լռել էր: Հավիտյան: Ոչ: Թղթին շարժվում էր գրիչը, ինչպես սառույցի վրայով: Լռության սառույցն ահավոր էր, սահմնելցուցիչ: Թղթին գրում են այս անգամ կարծես զոհի արյունով: Լևոն Բաղդասարյանը և Աղասի Եգանյանը ոգեշնչվելով թղթին են հանձնում «Տարեմուտի զանգակներ» պիեսի տեքստը: Ես կամաց-կամաց ներծծվում են նրանց ոգևորության ալիքների մեջ և ինքս ինձ գտնում... հիշողության եզրին» (էջ 105):

Ահա այսպես հոգեբանական ցավոտ ապրումներից հետո վերակենդանանում է Գյումրիի թատրոնը, և Լեոնիդը հանդիսատեսի դատին է հանձնում ներկայացումը: Ռոբերտն ընդգծում է, թե ինչպես աստիճանաբար վիշտն ու արհավիրքը հաղթահարելով ռեժիսորը ներկայացումների միջոցով հոգեկան թեթևություն է բերում աղետյալ քաղաքին:

Գյումրիի վերակենդանացած թատրոնի դերասանական խմբի մասին հպարտությամբ է խոսում բազմավաստակ ռեժիսորը: Նա չի մոռանում արվեստի աշխարհի մեծ երախտավորների արդյունավետ օգնությունը: Կարոտով է նշում թատերագետ-բանասեր Լևոն Հախվերդյանի, թատերական արվեստի անմար աստղ Սոս Սարգսյանի և մյուս վարպետների անունները:

Աշխատանքները Գյումրիում շարունակվում էին, երբ Լեոնիդին նորից Ստեփանակերտից հրավիրում են պետական դրամատիկական թատրոն: Այդ կապակցությամբ ռեժիսորն իր խոսքի մեջ նշում է. «Ես անկարող էի չգնալ: Չէ՞ որ ինձ կանչում էր անհավասար մարտերում հաղթանակներ կռած Արցախը: Եվ ես ընդառաջ գնացի այդ հզոր ծայրին՝ հույս ունենալով, որ նրա կենարար հողով և աստվածային ջրով կապաքինվեն իմ բոլոր վերքերը» (էջ 113):

Գրքի չորրորդ մասից սկսվում է ռեժիսորի բեմական կյանքի նոր աստիճանի պատումը: Նախ ներկայացվում է մանկապատանեկան թատրոնը, որի կայացման ճանա-

պարհին դժվար է գերազնահատել Լ. Հարությունյանի դերը: Նա Ստեփանակերտի թատրոնը համարում է արվեստի մի օջախ, որն ինքն էր ստեղծում թատերական միջավայր՝ կրթելով երիտասարդ դերասաններին: Դրան է առնչված նաև մանկապատանեկան թատրոնի ստեղծումը, որին կյանք պարզևողն ու ուղեկցող-ղեկավարը Լեոնիդն էր: Նա մանկապատանեկան թատրոնը համարում է թատերարվեստի այբուբեն: Եվ նրա առաջին հաջող քննությունը դառնում է Գ. Մամլիհի «Ողջույն դինոզավրին» պիեսի բեմադրությունը, որը փայլուն էր և ազդեցիկ:

Ռոբերտը բերում է թատերագետ Կարինե Ալավերդյանի կարծիքը «Լեոնիդ Հարությունյան» գրքից. «Գ. Մամլիհի «Ողջույն դինոզավրին» բեմադրությունը յուրատեսակ փորձաքար էր և՛ ռեժիսորի, և՛ ընդամենը երկու գլխավոր դերակատարների համար, որոնք երկու ժամից ավելի լարված պահում էին դահլիճը: Աննա Անդրեևնա-Մարգո Բալասանյանի և Վասիլի-Վաչե Փահլևանյանի բեմական երկխոսության մեջ հնչում էր բարու, զեղեցիկի, մարդկային հավիտենական թեման» (էջ 123):

Գրքում ընդգծվում են Լ. Հարությունյանի բեմադրությունները («Ա. Չխեիծի «Ազատ թեմայով շարադրություն», Գ. Խազակի «Անդրոն և Սանդրոն», Վ. Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», Խ. Ավագյանի «Անահիտ» և այլ պիեսներ):

Լ. Հարությունյանը գտնում է. «Եթե երեխան ներկայացում չի դիտում, ուրեմն նա արդեն կողոպտված է»: Իսկ Ռ. Եսայանն ավելացնում է. «Թատրոնը նաև մեր մտքի տեսողությունն է, հոգու նկարագիրը»:

Միագիծ չի ընթանում գրքի պատումը: Բարձրացվում են մշակույթների պահպանման ու պաշտպանման խնդիրներ՝ կոնկրետ առնչված Աղբրեջանի կառավարող շրջանների և վայ մտավորականների թալանչիական քաղաքականությանը: Ցավալի է համարվում այն երևույթը, երբ դասական արվեստ չունեցող Աղբրեջանը ձգտում է սեփականելու հարևանի ստեղծած մշակութային գանձերը: Այստեղ մեջբերվում է մեծն Գարեգին Նժդեհի խոսքը. «Օտար մշակութային արժեքների յուրացումը՝ տկարացնում է յուրացնողի ազգային ոգին» (էջ 128):

Բազմավաստակ ռեժիսոր Լ. Հարությունյանի թատերական գործունեությունն այնքան է հարուստ ու բազմերանգ, որ դժվար է ներկայացնել մեկ աշխատության մեջ: Սակայն, հուրախություն մեր թատերասերների, կարող ենք հավաստել, որ Ռոբերտին հաջողվել է ներկայացնել Լեոնիդի վիթխարի վաստակը: Գրքի հինգերորդ մասում հեղինակն ափամեջ է դնում վաստակաշատ ռեժիսորի թատերական նոր խիզախումներն Արցախյան ազգային-ազատագրական շարժման և պատերազմի տարիներին:

Այդ դժվարին օրերին բեմադրվեցին Գ. Թավրիզյանի «Մելիքի աղջիկը», Ժ. Անանյանի «Թռչող ափսեից իջած մարդը», Վ. Հակոբյանի «Արցախյան բալլադ» դրամաները:

Ռ. Եսայանը հաճելի երևույթ է համարում 1995թ. դեկտեմբերի 20-ին հանդիսատեսի դատին հանձնված «Առլեկինը՝ արքա» ներկայացումը: Նրա հաջող իրականացմանը նպաստեցին անվանի դերասաններ Բենիկ Օվչյանը (Տանկրեդ), Մարգո Բալասանյանը (թագուհի), Քաջիկ Հարությունյանը (Առլեկին-Բոենոնդ), Միքայել Հարությունյանը (Պանտալոնե), Սամվել Վիրաբյանը (Բոենոնդ), Ժաննա Գալստյանը (Գիզա), երիտասարդ դերասաններ Ռենիկ Մուրադյանը (Էտոց), Նարինե Ավետյանը (Կոլոմբինա):

Երեխաների համար թանկարժեք նվեր էր նաև «Տարեմուտի հրաշքեր» տոնածառային ներկայացումը, որի սցենարի հեղինակը և բեմադրող ռեժիսորը Լ. Հարությունյանն էր:

Ինչպես նշում է Ռ. Եսայանը, գրքի հինգերորդ բաժնում թատերական կյանքը մղվեց դեպի նոր հուն՝ գրավելով հանդիսատեսին Յ. Շիրազի «Միամանթ և Խջեզարե», Ռ. Աբրահամյանի «Հարսեր... կեսուրներ...», Է. Ռալակիի «Ալլանդակ էլզան», Եվրիպիդեսի «Անդրոմաքե», Խ. Ասատրյանի «Ձկնորս Սանդոն և որսորդ Վանոն», Ա. Կուռյանսկու և Ա. Խայտի «Դե, գայլ, սպասիր...», Ա. Օստրովսկու «Ամենը մեղավորներ», Է. Լաբիշի «Միգանտոպ», Ա. Աբրահամյանի «Սուրբ Շուշանիկ» պիեսների բեմադրություններով: Այս գործերի թվարկումն անգամ խոսում է ռեժիսոր Լ. Հարությունյանի քրտնաջան ու շնորհակալ աշխատանքի մասին:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Գրքում չի մոռացվում այն նորույթը, որ առնչված է պոեզիայի բեմադրության դժվարին և բարդ գործին, որին համարձակորեն ձեռնամուխ եղավ ռեժիսորը: Բեմից հնչեցին Դ. Շիրազի, Պ. Սևակի Վ. Դակոբյանի, Ռ. Եսայանի, տողերիս հեղինակի և այլ բանաստեղծների ընտիր գործերը:

Ռ. Եսայանը ոչ միայն աստվածաշնորհ բանաստեղծ է, այլև հրապարակախոս: Պատահական չէ, որ գրքում իր հերոսին բնութագրելիս դիմում է նաև մամուլի էջերում տարիների ընթացքում տպագրված նյութերի հեղինակների կարծիքներին՝ իր գնահատականները դարձնելով համոզիչ: Նա միաժամանակ ցավով մատնանշում է այդ փուլում թատրոնի հանդեպ կառավարող շրջանների կողմից ցուցաբերված անտարբերությունը և հույս հայտնում, որ մեր թատրոնն անպայման կվերանորոգվի ու կվերականգնի երբեմնի փառքը:

Գրքի վերջին բաժինը ներկայացնում է Լ. Դարությունյանի գործունեությունը Շուշիում: Այստեղ հոլովվում է 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի հայոց թատերարվեստի երախտավոր Սկրտիչ Խանդամիրյանի ազգանվեր գործունեությունը: Այդ առիթով Լեոնիդը երախտագիտությամբ է նշում. «Շուշիի Խանդամիրյան թատրոնը» եղել և մնում է մեր իրականության մեջ թատրոն բառի ընդգրկում իմաստով, իր ողջ ընթացքի մեջ կատարելագործվելով և հարստանալով նոր ներկայացումների բեմադրություններով» (էջ 185): Այստեղ նշվում է, որ 1891թ. հունիսի 7-ին հանդիսավոր բացվել է թատրոնի վարագույրը Սուրացանի «Ռուզան» դրամայի խաղարկմամբ:

Դառնալով այդ թատրոնի ավանդույթների շարունակողը՝ Լ. Դարությունյանը հպարտությամբ նշում է. «Մոխիրներից փյունիկի պես հառնող Շուշին այսօր ապրում է նոր ժամանակի սրտատրոսով՝ բեղմնավոր դարձնելով արարչական ոգին մեր մայրենիների նվիրումի, մտքի ու երազի թռիչքի ծիրով» (էջ 188):

Եվ նա գործով ապացուցում է իր նկատառումը: Նրա ջանքերով Շուշիի թատրոնն իր տեսակի մեջ դառնում է եզակի օջախ՝ իր մեջ համադրելով թատերական մի քանի ժանրեր՝ դրամատիկ, տիկնիկային, պոեզիայի և մանկապատանեկան թատրոն, ու այդ ամենը կատարվում է նույն դերասանական ներուժով, ընդամենը ութ դերասանների առկայությամբ:

Բաժնում բերվում է թատրոնի բավական հարուստ խաղացանկը, նրա ելույթները Շուշիում, Ստեփանակերտում, Երևանում, Գորիսում, Արմավիրում, Կապանում:

Ռ. Եսայանն ընդունում է Լ. Դարությունյանի կարծիքը, որ փոքր քաղաքի թատրոնը պետք է ունիվերսալ լինի: Միաժամանակ նշում է պոեզիայի բեմականացման կարևորությունը:

Ի դեպ, լայն արձագանք է գտել Ռ. Եսայանի «Դարության ժամանակը» գրքի բեմականացումը Շուշիի թատրոնում:

Անդրադառնալով բանաստեղծների և թատրոնի համագործակցությանը՝ ԼՂԳ գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Դակոբյանը ողջունում է երևույթը. «Բանաստեղծության բեմադրությունը բավականին բարդ և լուրջ գործընթաց է, ինչը ձեռնարկել չեն համարձակվում անգամ աշխարհի ճանաչված շատ թատրոններ: Մեր բանաստեղծությունն այսօր նաև բեմից դեպի ընթերցողը գնալու կարիք ունի: Լեոնիդ Դարությունյանի գործունեությունը նկատելի կերպով թարմություն բերեց մեր թատրոնին» (էջ 191):

Ռ. Եսայանը կարևորում է թատրոնի մշտական հանդիպումներն Արցախի պաշտպանության բանակի զինվորների հետ:

Գրքի վերջնամասում բերվում են Լեոնիդ Դարությունյանի՝ 104-ի հասնող բեմադրությունների ցուցակը և պատմական նշանակություն ունեցող լուսանկարներ:

Ծանոթանալով Լ. Դարությունյանի բեմադրած պիեսների ցանկին՝ համակվում են զարմանքի ու հիացմունքի զգացումներով: Նման վաստակի տեր գործիչը միայն կարող է մաքուր խղճով ու բացճակատ բարձրաձայնել. «Թատրոնը իմ կյանքի իմաստն է և բովանդակությունը, Բարձրալի կողմից ինձ տրված այն շնորհն է, որ ես նվիրաբերում եմ հայ հանդիսատեսին»:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Ընդունելով Լեոնիդի նվիրական աշխատանքը՝ Ռ. Եսայանը հանդիսատեսի անու-
նից դիմում է նրան.

Տիեզերքը փնտրում է իր շնչառության ելքը
խոսքով կենդանի՝

Ահա քո ոգին: Տիեզերքի

շնչառության բե՛ն՝ նր...
նոր արար ես բացում

շնչով ճառագայթի,

և նատներիդ արանքով

հոսո՛ւմ է հավերժությունը...(էջ 206)

Իսկ մենք՝ ընթերցողներս, կարող ենք վստահորեն հաստատել, որ բանաստեղծ Ռոբերտ Եսայանն ստեղծել է հանրագիտարանային մի աշխատություն, որտեղ ներկա-
յացվում է ոչ միայն ռեժիսորի ազգանվեր գործունեությունը, այլև Արցախյան թատրոնի
անցած փառավոր ուղին, որի փայլուն աստղերից է թատերարվեստի տաղանդավոր
գործիչ Լեոնիդ Չարությունյանը:

Սուկրատ Խանյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ